թը, որտեղ կոպիտ խաչքանդակներով զարդարված վիմաքարեր են կուտակված մի անհայտ գերեզմանի վրա։ Այդտեղ լուսէր՝ մոմեր վառելով՝ կպցնում էին քարերին, վառում էին կոպիտ կավե ճրագների բամբակե պատրույգները, բարեպաշտությամբ համբուրում էին քարերը և իրենց ջերմեռանդ աղոթքները դեպի արևելք առաքելով՝ հայցում էին մուրազների կատարում։ Այնուհետև իջնում էին սարից և լճից ոչ հեռու, մի տափարակ հրապարակի վրա, բերած մատաղացուն մորթում։ Քահանաներն իրենց տիրացուների հետ մեկի մոտից մյուսի մոտ վազվզելով՝ իրենց հասանելիք ոչխարի կամ գառան բուրդն ու մորթին էին հավաքում։ Շուրջը վխտում էին մանրավաճառներ, խնձորեսկցի աշուղներն այս և այն խմբին միանալով՝ իրենց երգի ու նվագի համար մեծարվում էին և իրենց վարձատրությունն ստանում։ Լավ քեֆ անելուց և կուշտ ուտելուց և պարելուց հետո բազմությունը երեկոյան դեմ վերադարձին ուղղվում էր դեպի Սրբ Կակոփի՝ Սուրբ Հակոբի խաչը, որը մի երկար քարատակ է և երկու կողմից երկու մուտք ունի։ Այստեղ արդեն անհրաժեշտ էր մի մուտքից մտնել և մյուսից դուրս գալ միշտ միևնույն ուղղությամբ։ Այսպիսի խողովակաձև անցնելը մի սովորական արարողություն էր, որը, ինչպես տեսանք վերը, կրկնվում էր Արծվանիկի մերձակայքում՝ Խդրանց գյուղի Զօրէֆոնի խաչի մոտ, որտեղ ուխտավորներն անցնում էին երկու իրար կից եկեղեցիների դռների միջով՝ պարտադրաբար մի դռնից մտնելով և հակառակ դռնից դուրս ելնելով։ Ինչպես վերը կնկարագրեմ, այսպիսի խողովակով՝ օղակով անցնելուն մագիկ ներգործություն էր վերագրվում որպես չար ոգիների ազդեցությամբ սպառնացող վտանգումներից ազատվելու միջոց։ Այս արարողությունը անպայման կապված չէր լեռան պաշտամունքի հետ և կատարվում էր այլ օրեր, գրեթե ամեն խաչայցելություններին։

Սակայն ոչ մի խաչ Վարդավառի օրն այնպիսի բազմություն չէր գրավում և բարեպաշտական զգացմունքներին այնպիսի լի գոհացում չէր տալիս, որպես Խուստուփ լեռան գագաթին այդ օրն ելնելը և նրա տակին գտնվող քարայրում լուս վառելը, աղոթելը և հետո սարին մատաղ բերելը։ Կապանի Վաշագան գյուղից դեպի հարավ, հենց գյուղի ձորի սկզբնավորության գլխին, շեշտակի վեր է ցցվում Խուստուփի ժայռոտ զանգվածի ուղղաձիգ կողը։ Լեռան երկու գագաթներից ձախակողմյանը Վաշագան գյուղից նայողին ավելի բարձրը է երևում։ Այդ ժայռոտ ապառաժի տակ ձորը ծածկված է խիտ անտառներով, որոնք գյուղի մերձակայքում խիստ նոսրանում են, խրմհատված են և փոխված են արտերի։ Քերծի ճակատին, գրեթե գագաթից սկսած դեպի վար, խորանում են երկու ակոսներ, որոնց մեջ մինչև օգոստոս և ավելի ուշ պահպանվում է ձյունը։ Ամենաերկարն է ձախակողմյան ձյան ժապավենը, որի գրեթե անընդհատ սպիտակ գիծը սկսվում է գագաթի մոտից և իր վերջավորությամբ կորչում է անտառի կանաչի մեջ։ Աջակողմյանը շատ ավելի կարճ է և լցնում է ակոսի միայն ստորին մասը։ Ձյան առանձին բծերը սպիտակին են տալիս մինչև վաղ աշուն քերծի այս կամ այն ծալքի մեջ։

Եկեղեցին, այսինքն՝ սուրբ քարանձավը, գտնվում է ձախակողմյան ակոսի աջ կողի մեջ և բացված է դեպի արևելահյուսիս։ Մուտքն ունի մոտ 30 քայլ լայնություն և մի փոքր ավելի բարձրություն, խորությունը հազիվ 50—60 քայլ է։ Առաստաղից կաթկթում է ջուրը, որը երաշտի ժամանակ դադարում է։ Հատակին, աջ և ձախ կողմերում, գոյացել են լճակներ։ Նրանց միջև կամուրջների նման ազատ մնացող տարածություններով կարելի է հասնել քարայրը